ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման 2016 թվականի հուլիսի 29-ին կնքված N ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՀԾՁԲ–16/9Հ պայմանագրի՝ 2017 թվականի ապրիլի 18-ին կնքված N1 համաձայնագրում կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1- ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1251-Ն որոշմամբ նվազեցվել է ՀՀ Արագածոտնի մարզի գ.Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների համար 2017թ.-ին նախատեսված ֆինանսական հատկացման չափը:

Փոփոխության նկարագրություն - N1 համաձայնագրի 1.1.1 կետում նշված <<1 112 850 (մեկ միլիոն մեկ հարյուր տասներկու հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ>> բառերը փոխարինվել են <<627 650 (վեց հարյուր քսանյոթ հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ>> բառերով:

Փոփոխության հիմնավորում- Պայմանագրի 7.3 կետով նախատեսված պայմանը:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

/29.07:2016 թ. կնքված N ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՀԾՁԲ–16/9Հ պայմանագրի/

ք. Երևան

<<19>> հոկտեմբերի 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս Կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և <<Տավրոս>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ղազարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի և <<Տավրոս>> ՍՊԸ-ի միջև 29.07.2016թ. կնքված ծառայությունների մատուցման N ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՀԾՁԲ–16/9Հ պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.3 կետը, 18.04.2017թ. կնքված N1 համաձայնագիրը և ՀՀ կառավարության 05.10.2017թ. N 1251-Ն որոշումը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1 Նվազեցնել Պայմանագրի 18.04.2017թ. կնքված N1 համաձայնագրի գինը 485 200 (չորս հարյուր ութսունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամով:

1.1.2 N1 համաձայնագրի 1.1.1 կետում նշված <<1 112 850 (մեկ միլիոն մեկ հարյուր տասներկու հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ>> բառերը փոխարինել <<627 650 (վեց հարյուր քսանյոթ հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ>> բառերով:

1.1.3 N1 համաձայնագրի վճարման ժամանակացույցը սահմանող հավելված թիվ 1-ը փոխարինել սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը սահմանող հավելված թիվ 1-ով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը՝ կազմված 1 էջից, համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011012607, ՀՎՀՀ 02565827	<<Տավրոս>> ՍՊԸ ք. Երևան, Պռոշյան 49 <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Հ/Հ 1150011872570100 ՀՎՀՀ 00026801
Աշխատակազմի ղեկավար _____ Ա. Մկրտչյան (ստորագրություն)	Տնօրեն _____ Ա. Ղազարյան (ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված թիվ 1
29.07.2016 թ. կնքված N ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՀԾՁԲ–16/9Հ պայմանագրի
թիվ 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 08, խումբ 02, դաս 03, ծրագիր 03)

ՀՀ դրամ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	235 500	235 500	235 500	627 650	627 650	627 650	627 650	627 650	627 650	627 650

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011012607, ՀՎՀՀ 02565827

ԿԱՏԱՐՈՂ
<<Տավրոս>> ՍՊԸ
ք. Երևան, Պռոշյան 49
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150011872570100
ՀՎՀՀ 00026801

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Ա. Նկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Տնօրեն՝

_____ Ա. Ղազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.